

Փետրուար 2026



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ,

451 թուականին, հայոց բանակի սպարապետ Վարդան Մամիկոնեան, իր վաթսուն հազար զինուորներով, դեմ դրաւ պարսկական երկու հարիւր հազարէ աւելի զօրքին, որպէսզի հայը մնայ հայ: Վարդանանց պատերազմի հերոսները հաւատքով զինուած, քաջաբար ուղղուեցան դէպի կռուի դաշտ, արհամարհելով մահը: Անոնք համոզուած էին, որ «Իմացեալ մահը անմահութիւն է»: Անոնք գիտէին, որ հայ ազգի փրկութեան համար կռուիլն ու զոհուիլը հերոսութիւն է: Իրենց թափած արեան շնորհիւ է, որ մենք այսօր կը պահենք մեր կրօնքն ու մեր ինքնութիւնը:

Նոյն գաղափարին հաւատարիմ մնալով, ճամբայ ելած են մեր բոլոր ֆետայիները եւ Արցախի ազատագրութեան համար նահատակուած բոլոր քաջերը: Անձնական հաճոյքներէն աւելի վեր դասելով հայրենիքը եւ հայ ժողովուրդի շահերը:

Դաւաճաններ եղեր են մեր պատմութեան մէջ, կան նաեւ այսօր. բայց դարերու ընթացքին կը գովերգուին միայն հերոսները:

Սիրելիներ, յիշենք Ղեւոնդ Երեցը, Քաջ Վարդանն ու իր զօրքը, յիշենք մեր պատմութեան բոլոր ժամանակներու անմահները եւ ըլլանք իրենց արժանի ժառանգորդները: Հաւատարիմ մնանք մեր հայրենիքին, պահենք մեր լեզուն եւ մեր կրօնքը:



ՓԵՏՐՈՒԱՐ ԱՄԻՍԸ

Փետրուարը տարւան երկրորդ ամիսն է եւ միակ ամիսը, որ ունի 28 օր նաեւ օրերու փոփոխական քանակ: Սովորական տարիներուն, Փետրուարը ունի 28 օր, իսկ նահանջ տարիներուն՝ 29:

Փետրուարին կը նշենք մեր ազգային պատմութեան կարեւոր դէպքերէն մէկը՝ Փետրուարեան ապստամբութիւնը: Երբ ֆետայական խումբերու անձնազօի պայքարի շնորհիւ բանտերէն եւ հալածանքներէն ձերբազատուեցան ազգային դէմքեր, մտաւորականներ եւ հոգեւորականներ:

Փետրուար ամսուան ընթացքին կը յիշատակուին շարք մը հայկական եւ համաշխարհային տօներ: Հայկական տօներէն են՝ Տեառնընդառաջը կամ Յիսուս մանուկի տաճար նուիրման տօնը, Վարդանանց տօնը, Բարեկենդանը եւ գիրք նուիրելու օրը: Համաշխարհային գետնի վրայ, Փետրուարին կը նշուին սիրոյ տօնը եւ Մայրենի լեզուի միջազգային օրը:

Փետրուար ամիսը ընդունուած է որպէս հոգեւոր մաքրագործման, սիրոյ եւ հաւատքի վերանորոգման ամիս:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Բուն Բարեկենդանը Հայ Առաքելական եկեղեցու կարեւորագոյն տօներէն մէկն է: Սուրբ Զատիկէն եօթը շաբաթ առաջ սկսող Մեծ Պահքին սկիզբն է: Բուն Բարեկենդանի նախորդող օրը եկեղեցւոյ խորանին վարագոյրը կը գոցուի մինչեւ մեծ պահքի աւարտը:

Պահիքը ուրախ սրտով դիմաւորելու համար, մարդիկ սովորութիւն ըրած են Բարեկենդանին ճոխ սեղաններ պատրաստել՝ իւղեղէն, մսեղէն եւ կաթնեղէն ճաշատեսակներով: Բարեկենդանի տօնախմբութիւններու ընթացքին, մարդիկ կը ծպտուին եւ կը զուարճանան: Այդ առթիւ կը կազմակերպուին խաղեր, երգ ու պարով ներկայացումներ եւ դիմակահանդէսներ: «Բարեկենդան» բառը բաղկացած է երկու բառերէ. «բարի» եւ «կենդան», որ կը նշանակէ ապրող: Հետեւաբար «Բարեկենդան» կը նշանակէ բարութեամբ ապրող, բարի կեանք ապրող:



ՍԻՐՈՅ ՏՕՆԸ



Փետրուար 14-ին գրեթէ ամբողջ աշխարհը կը նշէ Սուրբ Վալենթինի տօնը՝ Սիրոյ տօնը: Հայերուն սիրոյ սուրբը, Սարգիս Զօրավարն է, եւ Հայ Առաքելական եկեղեցին կը յիշատակէ զայն նոյնպէս՝ Փետրուար ամսուան ընթացքին:

Սուրբ Վալենթին 3-րդ դարուն ապրած հռոմէացի սուրբ մըն էր: Ըստ աւանդութեան, ան մահուան դատապարտուած է, որովհետեւ Հռոմի կայսրէն զաղտնի, քրիստոնէական պսակով կ'օծէր սիրահար զոյգերը:


Սուրբ Վալենթինի տօնը ընդունուած է աշխարհի մօտ 100 երկիրներու մէջ: Այդ օրը, մարդիկ զիրար սէր կը խոստանան. սիրահարներ՝ բացիկներ եւ նուէրներ կը փոխանակեն: Ամէն տարի այս տօնին աւելի քան 50 միլիոն վարդեր կը վաճառուին ամբողջ աշխարհի մէջ: Տուրմը (շոքուան) նաեւ սիրոյ տօնի տարածուած նուէրներէն մէկն է:

ԳԻՏԷԻՔ, ԹԷ ԻՆՉ ՊԱՏԱՀԱԾ Է ՆԱԵՒ 14 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ:

- Youtube-ը հիմնուած է 14 Փետրուար 2005-ին:
- Զաւախքի Հայ Օգնութեան Միութեան համագործակցութեամբ, 14 Փետրուար 2022-ին, Ախալքալաքի Երիտասարդական կեդրոնը Tumo Center for Creative Technologies իր դռները բացած է աշակերտներուն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (1869 – 1925) ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Յովհաննէս Թումանեան ծնած է Փետրուար 1869-ին, Լոռի գաւառի Դսեղ գիւղը: Իր նախնական կրթութիւնը ստացած է գիւղի վարժարանին մէջ, ապա յաճախած է Թիֆլիսի «Ներսիսեան» վարժարանը: Նիւթական պատճառներով ձգած է դպրոցը եւ նետուած գործի ասպարէզ: Աշխատակցած է «Մուրճ», «Հասկեր» եւ «Հորիզոն» գրական պարբերականներուն: Յետոյ ամբողջովին նուիրուած է գրականութեան:



Իր գրական աշխատանքներէն դուրս, Թումանեան եղած է ազգային եւ հասարակական գործիչ: Թումանեանի ներդրումը մեծ եղած է, երբ Հայոց ցեղասպանութենէն փրկուած հարիւր-հազարաւոր հայ գաղթականներուն ապահոված է տեղ եւ սնունդ Էջմիածինի մէջ: Այդ շրջանին է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ վիճած ժամանակ, ինքզինք կոչած է Ամենայն Հայոց Բանաստեղծ:

Թումանեան եղած է լաւատես եւ ժպտաղէմ անձ մը: Իր զրոյցներով ու կատակներով յաջողած է զուարճացնել իր շրջապատը եւ սիրուած եղած է բոլորէն:

Ան իր առաջին բանաստեղծութիւնը գրած է 12 տարեկանին եւ իր առաջին գործերէն մէկը եղած է «Շունն ու Կատուն»: Բանաստեղծ Թումանեան գրած է առակներ, Քառեակներ, վիպերգներ, պատմուածքներ եւ հեքիաթներ: Իր գործերէն են. «Կաթիլ մը մեղրը», «Անբախտ վաճառականներ», «Փարվանա», «Սասունցի Դաւիթ», «Անուշ», «Թմկաբերդի առումը», «Քաջ Նազար», «Տէրն ու ծառան», «Կիկոսի մահը» , «Բարեկենդանը», «Անխելք մարդը», «Խօսող ծուկը» եւայլն:

1921-ի աշնան, Թումանեան գացած է Պոլիս հայ գաղթականներուն օգնութիւն ապահովելու նպատակով: Քանի մը ամիս մնալէն ետք, վերադարձած է հիւանդացած: Բուժուելու համար ճամբորդած է Մոսկուա, ուր մահացած է 1923 թուականին:

Թումանեան մանկական գրականութեան մեծագոյն վարպետն է. իր հեքիաթներուն եւ առակներուն մէջ դասեր կան քաղելիք թէ փոքրերուն, թէ մեծերուն համար:

ԳԻՏԷԻՔ, ԹԷ ԻՆՉՈՒ...

Հայաստանի մէջ, 19 Փետրուարին գիրք նուիրելու օրը կապուած է Յովհաննէս Թումանեանի ծննդեան օրուան հետ, որովհետեւ 20-րդ դարու սկիզբին, Կովկասի մէջ Գրողներու միութիւն չկար. Թումանեան ինքն էր, որ հիմնած էր «Վերնատուն» գրական ակումբ-խմբակը, եւ իհո՛ն է, որ կը համախմբուէին հայ մտաւորականներ՝ Ղազարոս Աղայեան, Աւետիք Իսահակեան, Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան եւ ուրիշներ:

Գիրք նուիրելու տօնի նպատակներէն են.

- Քաջալերել հայերէն գիրքի ընթերցանութիւնը.
- Փոխանցել նոր սերունդներուն գիր ու գրականութեան նկատմամբ սէր.
- Ընթերցողին ծանօթացնել հայ գրականութիւնն ու հոգեւոր-մշակութային արժէքները:



19
Փետրուար՝
գիրք
նուիրելու
առանձնական
օր

ՀԱՆԵԼՈՒԿ (ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ)

Փոքրիկ Արտաշէսը իրենց հորթը չգտաւ արտին մէջ: Մտածեց, որ քովի ծորակը փախած ըլլալու է: Երբ սուլելով ծորակէն կ'անցնէր, յանկարծ լսեց, որ ուրիշ մէկն ալ կը սուլէ: Խորհեցաւ, որ եղբայրն է: Կեցաւ ու կանչեց.

- Վահան, դո՛ւն ես...

- Ես...

- Եղբայր, մեր հորթը ո՞ւր գնաց, տեսա՞ր:

- Մ'ար:

- Կատամկ կ'ընես, ի՞նչ է:

- Չէ:

- Վայ, չէ՞ որ հոն գայլ կայ, հորթուկը կ'ուտէ:

- Կ'ուտէ:

Արտաշէսը վազեց տուն, որ հորը լուր տայ: Բայց երբ տուն հասաւ, տեսաւ, որ հորթն ալ տունն է, Վահանն ալ:

**Ո՛վ էր Արտաշէսին պատասխան
տրուողը:**

Կայ, սակայն մարմին չունի,

Կը լսէ, ականջ չունի,

Կը խօսի, բերան չունի:



ԲՋԻՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՕՍԻ ԱՆՊԱՏԵՀՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.- Հեռախօսի չափազանց օգտագործումը մեզ կը վերածէ մեկուսացած անձերու: Յաճախ, նոյնիսկ երբ ֆիզիքապէս ներկայ ենք տեղ մը, մտովի բացակայ կ'ըլլանք հոնկէ, որովհետեւ մեր կեդրոնացումը կ'ըլլայ մեր հեռախօսին վրայ:

2.- Հեռախօսի վրայ երկար ժամեր անցընելը անքնութիւն կու տայ. նաեւ վիզի, ձեռքի եւ մատներու ցաւ կը պատճառէ:

3.- Հեռախօսէն մեզի հասած շողարձակումը կրնայ առողջական լուրջ հարցեր յառաջացնել, ինչպէս՝ ուղեղի կամ մորթի քաղցկեղ:

4.- Հեռախօսին պաստառին լոյսը ժամանակի ընթացքին, կրնայ տեսողութեան հարցեր պատճառել եւ վնասելաչքի ցանցաթաղանթին:

5.- Հեռախօսի չափազանց գործածութիւնը կրնայ հոգեբանական հարցերու առաջնորդել եւ մեզ անձնակերպին անձի մը վերածել:

6.- Մեր ընտանեկան կեանքի բարօրութիւնը կրնայ խանգարուիլ, երբ մենք մեր բոլոր ազատ ժամերը կ'անցընենք հեռախօսի վրայ: Շատ ատելի լաւ կ'ըլլայ, եթէ այդ ժամանակը դնենք զրոյցելու եւ յիշատակելի ժամեր անցընելու մեր ընտանիքի անդամներուն հետ:

7.- Հեռախօսները ընդհանրապէս սուղ կ'ըլլան, եւ մեր ծնողներուն պիտոճէին վրայ բաւական մեծ բեռ են. մանաւանդ եթէ կ'ուզենք միշտ վերջին նորութիւններէն օգտուիլ կամ մեր ընկերներուն նայելով կ'ուզենք յաճախ փոխել մեր հեռախօսը:

8.- Հեռախօսները նոյնիսկ մեր կեանքին վտանգ կրնան սպառնալ, եթէ ինքնաշարժ վարելու ժամանակ փորձենք խօսիլ, գրել կամ նամակ ուղարկել մեր բարեկամներուն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՏԱԹԵԻՒ ՎԱՆՔԸ



Տաթեի վանքը կառուցուած է 4-րդ դարուն: Վանքը ունի տաճար մը, երկու եկեղեցի եւ զանգակատուն մը: Վանքի անուան հետ կապուած կան զանազան առասպելներ: Անոնցմէ մէկուն համաձայն վանքի քարագործ վարպետը տաճարի գմբէթին վերջին քարը զետեղելէ ետք, գլուխը երկինք կը բարձրացնէ Աստուծոյ փառք տալու համար ու կ'ըսէ «Հոգին Սուրբ տայ թեւ»: Աստուած կը լսէ վարպետին կանչը եւ անոր կու տայ թեւեր: Քարագործ վարպետը կը թռի երկինք ու կ'անհետանայ մարդոց աչքերէն: Այդ իսկ պատճառով վանքը կը կոչուի Տաթեւ:

Տաթեի վանքը կը գտնուի Սիւնիքի մարզի Տաթեւ գիւղին մէջ: 14-րդ դարուն հոն գործած է Տաթեի նշանաւոր համալսարանը, գործած է նաեւ մանրանկարչութեան ու գրչութեան դպրոցը: Տաթեի վանքը ունեցած է խոշոր մատենադարան մը, 10 հազար ձեռագիր մատենաներով:

Տաթեի վանքը 1919-21 թուականներուն Զանգեզուրի ինքնապաշտպանութեան պայքարի ժամանակ դարձած է Գարեգին Նժդեհի գլխաւոր կեդրոններէն մէկը:

Տաթեի վանքի տարածքին, իւրայատուկ տեղ կը գրաւէ Տաթեի գաւազան-սիւնը: Սիւնի զագաթին կայ գեղեցիկ խաչքար մը: Յատուկ քարերով հիւսուած այս սիւնը, խաչքարի հետ միասին ունի 9 մետր բարձրութիւն: Այս սիւնը կոչուած է «ճօճուող յենարան» կամ «կենդանի գաւազան», որովհետեւ ճօճուելով կը նախազգուշացնէր վանականները մօտեցող վտանգներէն, ըլլան անոնք երկրաշարժներ կամ թշնամի զօրքի յարձակումներ:

2010 թուականին, բարերար եւ Արցախի Հանրապետութեան պետական նախարար Ռուբէն Վարդանեան կը կառուցէ «Տաթեի Թեւեր» կոչուող ճոպանուղին: Այս գեղեցիկ ճոպանուղին կը կապէ Տաթեի վանքը Հալիճոր գիւղին հետ: Ան աշխարհի ամենաերկար ճոպանուղին է, որուն երկարութիւնը 5.7 քիլոմետր է:

ԽՆՁՈՐԸ

Խնձորը շատ օգտակար պտուղ մըն է: Եթէ ամէն օր մէկ խնձոր ուտենք, շատ մը հիւանդութիւններէ կրնանք խուսափիլ: Ճաշէն ետք, խաճենով խնձոր մը ուտելը, լաւ միջոց է մաքրելու ակոսները եւ զօրացնելու լինտերը: Խնձորը հարուստ է կենսաանիւթերով եւ մետաղներով, կրնայ բարելաւել ուղեղի աշխատանքը եւ յիշողութիւնը:

Խնձորը ունի տարբեր գոյներ՝ կարմիր, դեղին եւ կանաչ: Համը կրնայ ըլլալ անոյշ կամ թթուաշ, կան մեծ ու պզտիկ չափի խնձորներ: Աշխարհի տարածքին կան 1000-էն ատելի խնձորի տեսակներ: Իսկ Հայաստանի մէջ՝ 300 տեսակ:

Խնձորի ծառին կ'ըսենք խնձորենի: Արեւմտեան Հայաստանի Արտամետ գիւղը նշանաւոր էր իր խնձորենիներով:

Խնձորով ասացուածքներ

- Որդը ամենաքաղցր խնձորը կ'ուտէ:

- Խնձորը ծառէն հեռու չ'իյնար:

- Խնձորի նման այտեր ունի:



ԿԱԹՆԱՊՈՒՐ



Կաթնապուր



Կասիա

Կաթնապուրը բարեկենդանի սեղանը զարդարող անուշեղէնի տեսակներէն մէկն է: Անոր բաղադրիչներն են. կաթ, բրինձ եւ շաքար:

Պատրաստութիւն

Բրինձը լուալ: Թրջել պաղ ջրի մէջ եւ քամել քամիչով: Յետոյ զայն պարպել տաք կաթի մէջ պարբերաբար խառնելով: Հանդարտ կրակի վրայ եփել եւ վերջը ատելցնել շաքարը: Պնակներու մէջ դնելէ ետք ցանել փոշի կասիա (cinnamon):

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ցանցին մէջ փորձեցէք գտնել ու ջնջել տուեալ 9 նուագարաններուն անունները, ապա մնացեալ տառերով փորձեցէք կազմել պահուած բառը: Բառերը ջնջել հորիզոնական շարքերու եւ ուղղահայեաց սիւնակներու վրայ, երկու ուղղութեամբ: Իւրաքանչիւր տառ միայն մէկ անգամ օգտագործել:

Տ	Ը	Շ	Ո	Ի	Ի	Զ
Ո	Ի	Թ	Ե	Ը	Ա	Ո
Ի	Ո	Ա	Տ	Լ	Ն	Ի
Տ	Թ	Ռ	Ա	Ո	Ո	Ռ
Ո	Ն	Ժ	Ի	Հ	Ն	Ն
Ի	Ա	Ի	Ի	Տ	Ա	Ա
Կ	Ս	Շ	Ղ	Տ	Ք	Յ
Ք	Ա	Մ	Ա	Ն	Չ	Ա

ՇՈՒԻ	ՔԱՆՈՆ	ՔԱՄԱՆՉԱ
ԹԱՌ	ՄԱՆԹՈՒՐ	ՏԱԻՂ
ՏՀՈՒ	ԶՈՒՌԱՅ	ՏՈՒՏՈՒԿ



Տուտուկ



Shnq



Քամանչա



Սանթուր

ՍՊԻՏԱԿ ԱՐՋԸ



Սպիտակ արջը կը կոչուի նաեւ ծովային արջ կամ Բեւեռային արջ: Ան Հիւսիսային Բեւեռի մէջ տարածուած արջի տեսակ մըն է: Սպիտակ արջը նման է գորշ արջին, ան կրնայ համակերպիլ ցուրտ կլիմայի մէջ ապրելու: Բեւեռային արջը կը սիրէ ապրիլ այն տեղերը, ուր սառոյցը կը հանդիպի ջուրին, ուր կրնայ գտնել իր սնունդը կազմող կենդանիներ, ինչպէս՝ ծովածուկը, փոկը, ծովային նապաստակը: Սպիտակ արջը ծանրամարմին կենդանի է, սակայն բաւական արագաշարժ եւ ճարպիկ է, ան հանգիստ կրնայ լողալ եւ սուզուիլ ջուրին յատակը:

Սպիտակ արջը աշխարհի ամենամեծ ցամաքային գիշատիչն է եւ կը կշռէ 350-680 քիլո: Սպիտակ մուշտակը ամրան կը դեղնի արեւի լոյսէն: Ուռքերու ներքանները բրդոտ են որպէսզի չսահի սառոյցին վրայ եւ մատներուն միջեւ լողաթաղանթներ ունի: Ան ունի շատ ուժեղ հոտառութիւն, լսողութիւն եւ տեսողութիւն, իր զոհը կրնայ տեսնել հեռուէն եւ հոտը կրնայ առնել 800 մեթրէն:

Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԸԼԼԱՆ ԲԱԶՄԱԳԵՏ

Փետրուար ամսուան հարցումներուն պատասխաններուն ժամկէտն է 15 Մարտ 2026: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Olivar Asselin
Montréal, Québec
H4J 1L5

1- Քանի՞ օր կ’ունենայ Փետրուար ամսուան նահանջ տարին:

ա- 31 օր:
բ- 29 օր:
գ- 28 օր:

2- Ու՛ր ծնած է Յովհաննէս Թումանեան:

ա- Կիւմրի
բ- Լոռի
գ- Շիրակ

3- Յովհաննէս Թումանեանի հեքիաթներէն մէկը կը կոչուի...

ա- Անահիտ:
բ- Քաջ Նազար:
գ- Անտառի Մանուկ:

4- Ո՞ր դարուն կառուցուած է Տաթևի վանքը:

ա- 5-րդ դարուն:
բ- 7-րդ դարուն:
գ- 4-րդ դարուն:

5- 2010 թուականին, ո՞վ էր այն բարերարը, որ կառուցեց «Տաթևի Թեւեր» կոչուող ճոպանուղին:

ա- Արցախի Հանրապետութեան պետական նախարար Ռուբէն Վարդանեանը:
բ- Արցախի Հանրապետութեան նախարար Արկաղի Ղուկասեան:
գ- Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան:

6- Հեռախօսի լոյսի արձակումը կը վնասէ...

ա- Լսողութեան:
բ- Հոտառութեան:
գ- Տեսողութեան:

7- Արեւմտեան Հայաստանի ո՞ր գիւղը նշանաւոր էր իր խնձորենիներով:

ա- Արտամետ:
բ- Ազաբերդ:
գ- Բերդաձոր:

8- Ինչ կարելի է ցանել կաթնապաւորին վրայ:

ա- Փոշի պղպեղ:
բ- Փոշի շաքար:
գ- Փոշի կասիա:

9- Սպիտակ արջի սնունդը կազմող կենդանիներէն մէկն է...

ա-Կրիան:
բ- Փոկը:
գ- Եղնիկը:

10- Հայկական ժողովրդական նուագարաններէն մէկն է...

ա- Զութակը:
բ- Դաշնակը:
գ- Քամանչան:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757

Email: sylvia@horizonweekly.ca

Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Շողեր Ճելլատեան
Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի